հաւատարիմ գրագիր և թարգման Տէր Դաւիթ Աւագ քահանայի գրուածոցն տեղեկանալոց էք։

Մնամք միշտ առ հաւատարիմ բարեկամսդ մեր

ի սրտէ բարերար Արքայ վրաց կախից և այլոց։

1799 ի հոկտ[եմ]բերի 23

ի մայրաքաղաքս Թիֆլիզ։— ձեռնագրեալ Գիորկին

Սովաւ հաստատեմք զվերոյգրեալ պատճենն գրոց լինել հաւաստի պատճեն նախատիպ գրոյն, նոյն այս օր զգուշեղաբար բաղդատեցաւ ընդ նախագաղափարին, եղև ի Մատրաս ի Յարևելեան հնդիկս այս եօթներորդ օր նոյեմբերի, յամի տեառն մի հազար ութ հարիւր և մետասան։

Կնիքդ Աղաբէգ Մելիք Բէգլարեան

Յարութիւն Թարխանի Խոջ[ա]Մինասեանց

In sestimonium veritalis

Notary public

Madras

ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 232, 1799 թ., 2 թերթ։

№ 5

Յովհաննէս Շահամիրյանի և Նազար Յակոբջան Շահամիրյանի նամակը Վրաստանի կառավարչին

Առ նորին գերազանցութիւն ընդհանուր կառավարիչ Վրաստանի և այլն և այլն

Հաճոյ թուեսցի ձերումդ գերազանցութեան

Հայցեմք խոնարհաբար ներել մեզ առաջի լինիլ ձերումդ գերազանցութեան, զի մեք անագան ուրեմն տեղեկացեալքս կայսերական հրատարակութեան ի ձեռն կառաւարչին Վրաստանի յաղագս քաղաքին Լոռուոյ, որ ի վիճակին վրաց, յորումն յայտ առնէ, զի եթէ ոք յետնեալ գտանիցի յանդիման առնել զանձն ի պահանջումն յիշեալ քաղաքին ի կրկին հնգեակս ամաց, սկսեալ յօրէ անտի իշխանութեան ձերոյ ի Վրաստան, այնուհետև քաղաքն այն գրաւեսցի յարքունուստ յանուն օգոստափառ կայսեր Ռուսիոյ և այլն և այլն և այլն։

Վասնորոյ և մեծի խոնարհաբար հայցեմք լսել աղաչանաց մերոց, զորս պարգել համարձակեսցուք առաջի ձերումդ գերազանցութեան, զի քաղաքն այն պատկանի իսկապես հանգուցեալ վերջնոյ իշխանին Շամիր Սուլթան կոչեցելոյ և անտի հասանէ առ մեզ՝ առ որդիս իւր և որդւոց յորդիս զայրական սեռին յաջորդութեան ի կարգին ունելով տեսլոց է մինչև ցկատարած աշխարհի։ Այսպէս ուրեմն հաստատեալ և կարգեալ ի պարգևի մասին արքայական շնորհիւն, որ ի ձեռն իշխանին վրաց հրամանաւ հօր իւրոյ վեհափառ թագաւորին Վրաստանի Հերակլ Երկրորդի և վերջնոյ և այլն և այլն։

Զայսմանէ ունիմք առ մեզ գործս և վկայականս զիրաւանց քաղաքին ի մերս սեպհականութեան։ Եւ օրինակք գրութեանցն այնոցիկ||գտանիցին անշուշտ և այժմ իսկ ի դիւանին կառավարութեան Վրաստանի։ Վասնորոյ յոյժ յարգանօք խնդրեմք ի գերազանցութենէն ձերմէ յուշի ունելով զաղերս մեր հաճեսջիք ընձեռել առ մեզ զյատուկ պաշտպանութիւն ձեր սակս յիշեալ քաղաքին Լոռուոյ։

Ազգն մեր ի սկզբանէ անտի վաճառականական պայմանադրութեամբ ընդ տէրութեան պայծառափայլ ազգին ձերոյ քաջապէս զփորձ առեալ զօրինաւորն ապահովութեան իրաւանց իւրոց և այժմ ևս զայն պատեհ առիթ ի ձեռն ունելով կրկնէ զշնորհակալիս իւր ձերումդ գերազանցութեան և խնդրէ միանգամայն